Մեկ թվում է, թե վստահորեն պետք է հաշվի առնվեր «Ինագակիրների պատմականն ու ներքոդյանը» երկի տեղեկությունը, ըստ որի Իվաննեն աթաբեկ է դարձել 1212/13 թ.: Աշխատության «Ներածության» մեջ (էջ 11—12) բերվում է 1310 թ. մի ձեռագրի հիշատակարան: Համաձայն հիշատակագրի վկայության, ոմն Պետրե Լագամե գրել է Աղվանքի պատմությանը վերաբերող մի երկ, որն այնուհետև ինչ-որ հայ փոխադրել է հայերենի, հեղինակությունը վերագրելով իրեն: Տեղին կլիներ, եթե հեղինակը ծանոթագրություններում անդրադառնար այս հիշատակարանի բննությանը, որովհետև եթե նրանում պարունակված տվյալները ճիշտ են, ապա գործ ունենք մի ինչ-որ անհայտ վրացերեն երկի և նրա հայերեն թարգմանության հետ:

Գերագասելի կլիներ, եթե արձանագրությունների հայերեն թարգմանությունները տողատվեին ըստ վրացերեն բնագրի և հայերենից անմիջապես հետո անխտիր տրվեին բոլորի ուսերեն թարգմանությունները:

Պ. Մուրադյանի գրախոսվող գիրքն ունի համապատասխան քարտեզ, ուսերեն ընդարձակ ամփոփում, արձանագրությունների ժամանակագրական, տեղագրական և բնութագրական տախտակ, անձնանունների և տեղանունների ցանկեր: Հրատարակչական-պոլիգրաֆիական կատարումով ևս այն օրինակելի հրատարակություն է:

Պիտի հուսալ, որ սույն աշխատությամբ ծնունդ առնող „Armeno-Georgica" մատենաշարը կգոյատևի և մոտ ապագայում կհամալրվի կովկասագիտական նոր հետազոտություններով:

Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Ա. Մ. ՔԱՄԱԼ, Քուրդստանը առաջին հսմաշխարհային պատերազմի տարիներին* (արաբերեն), Բաղդատ, 1977 թ., 412 էջ:

Քուրդ ժողովրդի պատմության կարևոր էջերից մեկին է նվիրված Իրաքի քրդական գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ արաբերեն լույս տեսած, իրաքցի քուրդ պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր Ահմեդ Մոզհար Քամալի «Քուրդստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» ստվարածավալ աշխատությունը: Այն քրդերենից արաբերեն է թարգմանել նույն ակադեմիայի թղթակից անդամ Մոհամեդ էլ-Մոլլա Արդ ալ-Քարիմը: Օգտվելով առիթից, Ա. Մ. Քամալը վերանայել է աշխատությունը, կատարել մի շարք լրացումներ: Գիրքը բաղկացած է թարգմանչի և քրդերեն ու ներկա հրատարակությունների համար հեղինակի գրած առաջաբաններից, վեց գլուխներից և վերջաբանից:

Ա. Մ. Քամալի այս մենագրությունը առաջին լուրջ փորձն է քուրդ ժողովրդի պատմության նշված ժամանակահատվածի ուսումնասիրման ասպարեզում: Նրա վեց գլուխներում, որոնց շարադրանքի համար օգտագործված են ռուս, առավելապես սովետական, եվրոպացի և արեվելյան հետազոտողների ուսումնասիրությունները, քննության են առնվում իրար հետ սերտորեն կապված մի խումբ հարցեր: Ընթերցողը պատկերացում է կազմում XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին քուրդ ժողովրդի սոցիալ-քաղաքական վիճակի մասին ընդհանրապես և առաջին համաշխարհային պատերազմում նրա այս կամ այն չափով ներգրավվելու մասին մասնավորապես:

Աշխատության առաջին գլխում հեղինակը ցույց է տալիս պատերազմի պատճառները, Անգլիայի, Գերմանիայի, Ռուսաստանի և մասամբ Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի հետաքրքրությունները Քուրդստանով: Մինչև պատերազմը, տարբեր ժամանակներում, այստեղ ահանապարհորդել են վերը նշված երկրների քաղաքական, ռազմական գործիչներ, որոնք ոչ միայն ուսումնասիրել են Քուրդստանի բնական հարստությունները, ծանոթացել նրա աշխարհագրական դիրքին, այլև դրել նրա բնակիչների մասին:

Ա. Քամալը գտնում է, որ այդ ճանապարհորդություններն ունեցել են չափազանց նկատառումներ, միաժամանակ նշելով, թե Քուրդստանի վերաբերյալ եվրոպացի ճանապարհորդների հաղորդումները, առանձին գործերը, որոնք հրատարակվել են տարբեր երկրներում, արժեքավոր նյութ են պարունակում քուրդ ժողովրդի նոր դարերի պատմության զանազան պրոբլեմների հետազոտության համար: Այդ հեղինակներից են Կ. Ռիչը, Հ. Ռավլինսոնը, Ջ. Մորիերը, Մեջր Սոնը, Լ. Ավերյանովը, Վ. Մինորսկին, Պ. Լերխը և ուրիշներ:

---

* كمال أحمد مظهر. كردستان في سنوات الحرب العالمية الأولى، بغداد. ١٩٧٧. ٤١٢ صفحة.

Ի մի բերելով այս փաստերը, Ա. Քամալը ձգտում է ցույց տալ, որ Քուրդստանը չի վրիպել եվրոպացիների ուշադրությունից, մի բան, որ առաջին Համաշխարհային պատերազմի նախօրյակին ավելի պարզորոշ արտահայտվեց։

«... Մերձավոր և Միջին Արևելքում պայքարի և հակասությունների մեջ ներգրավվեցին բոլոր մեծ տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանը։ Քուրդստանը, որպես հարուստ ու այս տարածքում ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող երկիր առանձնահատուկ տեղ էր զրաղեցնում մեծ տերությունների ծրագրերում թե՛ պատերազմի նախօրյակին և թե՛ նրա ընթացքում...» (էջ 21)։

Գրքի երկրորդ գլխում («Պատերազմի շեմին») խոսվում է թուրք-քրդական հարաբերությունների, քրդերի սոցիալական վիճակի և նրանց նկատմամբ Օսմանյան կայսրության վարած քաղաքականության մասին և այլն։ Հեղինակը հատկապես ընդգծում է, որ Ռուսաստանի դեմ քրդերին հանելու նպատակով թուրքական կառավարությունը որոշ չափով մեղմացրեց իր քաղաքականությունը նրանց նկատմամբ և քուրդ ցեղապետներին տվեց որոշ արտոնություններ ու խոստումներ։ Բայց քրդաբնակ վայրերում շարունակվեցին հակաթուրքական խմորումները, ընդվզումները։ Այսուհանդերձ, ինչպես ենթադրում է հեղինակը, կրոնի միասնությունը (իսլամը) մեծ դեր խաղաց պատերազմի տարիներին քրդերին տարբեր ճակատներում օգտագործելու հարցում։

«Պատերազմի հորձանուտում» գլխում Ա. Քամալը անդրադառնում է Մերձավոր Արևելքում Գերմանիայի ունեցած տնտեսական և քաղաքական ազդեցության հարցին։ Հեղինակի կարծիքով քրդերը չէին կարող չմասնակցել պատերազմին, որովհետև նրանց երկիրը դարձավ ռազմական գործողությունների ասպարեզներից մեկը։

Պատերազմի սկզբից ևեթ թուրքերն ու գերմանացիները քրդերին կոչ էին անում «սրբազան պատերազմի» բնել Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեմ։ Օսմանյան կայսրությունը նույնիսկ խոստանում էր պատերազմի ավարտից հետո նրանց ինքնավարություն տալ։ Ջնայած այս պրոպագանդան մասսայական արձագանք չգտավ քրդական զանգվածում, սակայն փաստ է, որ թուրքական բանակը դեռևս պատերազմի սկզբից համալրվում էր քուրդ դինակոչիկներով։

Ա. Քամալի շարադրանքից և բերված փաստերից կարելի է հանգել այն եզրակացության, որ պատերազմի չորս տարիներին քուրդ ազգարնակչությունն իրեն դրսևորեց որպես տատանվող տարր, որը հանդես էր գալիս մերթ սուլթանական կառավարության ու Գերմանիայի, մերթ մյուս տերությունների դեմ։ Ըստ երևույթին, այդ բացատրվում է նրանով, որ Թուրքիայում, Իրանում և Իրաքում բնակվող քրդական ցեղերը դեռևս հեռու էին միասնության գաղափարից և տվյալ անելանելի իրադրության պայմաններում հազիվ թե կարողանային միանալ ու ճիշտ կողմնորոշվել, մանավանդ առկա էին դրան խոչընդոտող պատճառներ։

Պատերազմի տարիներին քրդերին սիրաշահելու նպատակով տարբեր ուղիներ էին փրնտրում հատկապես Անգլիան և Ռուսաստանը։ Թուրքիայի և Իրանի քրդական որոշ ցեղերի վրա քիչ թե շատ նկատելի էր ռուսների, իսկ Իրաքում՝ անգլիացիների ազդեցությունը։

Աշխատության «Պայքար և զոհեր» գլխում ցուց են տրվում պատերազմի տարիներին քրդական զանգվածում օր-օրի աճող հակաթուրքական տրամադրությունները, քրդական ազգային կազմակերպությունների գործունեությունը, թուրքական և իրանական Քուրդստաններում ծավալված զանազան շարժումները և այլն։

Հեղինակը գտնում է, որ պատերազմը քրդերին նույնպես պատճառեց զրկանքներ, արհավիրք։ Պատերազմից հետո նրանց «սրբազան պատերազմի» հրահրող թուրքական կառավարող շրջանները կազմակերպեցին իրենց իսկ կրոնակիցների՝ քրդերի կոտորածներ։

Հայ ընթերցողի համար առավել ուշագրավ է Ա. Քամալի մենագրության «Քրդերը և հայի հեղված արյունը» խորագրով ծավալուն 5-րդ գլուխը։ Ի տարբերություն աշխատության քրդերեն հրատարակության, հատկապես այս գլխի սրաբերեն տարբերակը բավականաչափ խմբագրվել է, հեղինակի կողմից լրացվել է նոր նյութերով, կատարվել են մի շարք բարեփոխումներ։

Արդարև, քրդագիտության պատմության մեջ համարյա առաջին անգամ քուրդ պատմաբանը գիտական վերլուծությամբ արաբ և քուրդ ընթերցողներին է ներկայացնում Օսմանյան կայսրության կողմից կազմակերպված հայկական մասսայական ջարդերը և նրանցում քրդական հրոսակախմբերի մասնակցությունը։

Այս գլուխը շարադրելու համար օգտագործվել են ռուս, սովետական, սովետահայ, արաբ, քուրդ ու եվրոպացի պատմաբանների ուսումնասիրությունները։ Հեղինակը համառոտակի նկարագրում է Օսմանյան կայսրության ընդհանուր քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում XIX դարի վերջերից մինչև առաջին համաշխարհային պատերազմը, այն եզրափակելով 1914—1915 թթ. հայկական ցեղասպանությամբ։ Օգտվելով պատեհ առիթից, նա թուրքիկ ձևով անդ-

րադարձել է նաև հայ ժողովրդի պատմությանը՝ հին ժամանակաշրջաններից մինչև 1828 թ. Թուրքմենչայի պայմանագիրը, շեշտել նրա կյանքում տեղի ունեցած պատմական խոշոր իրադարձությունները։ Խոսելով XIX դարում Հայաստանի երկու հատվածներում սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին, Ա. Քամալը իրավացիորեն գրում է, որ դրանք ունեին զարգացման տարբեր ուղիներ. «Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միանալուց հետո սկսեց ավելի արագ տեմպերով զարգանալ, քան Արևմտյան Հայաստանը։ Դա բնական երևույթ էր, որովհետև զարգացման հեռանկարները եվրոպական երկրի տիրապետության տակ ավելի մեծ էին, քան ասիական հետամնաց երկրի լծի ներքո։ Հայաստանի այս (արևելյան—Ա. Փ.) հատվածում մշակութային կյանքը նույնպես զարգացման ավելի բարենպաստ ուղի անցավ, քան Արևմտյան Հայաստանում։ Արևելյան Հայաստանը արևմտյան հատվածից ավելի շուտ շփվեց համաշխարհային կապիտալիստական շուկայի հետ, այնտեղ ձևավորվեցին արտադրական նոր հարաբերություններ...» (էջ 244—245)։

Ներկայացնելով հայ-քրդական փոխհարաբերությունների պատմության համառոտ նկարագիրը, հեղինակն ընդգծում է, որ հայ և քուրդ ժողովուրդներն ապրելով կողք-կողքի եղել են բախտակից ժողովուրդներ, պայքար են մղել օտար տիրապետության դեմ։ Սակայն նրանք ունեն տարբեր դավանանքներ և, ամենակարևորը, հայ ժողովուրդը քրդերից ավելի վաղ է անցել պատմական բոլոր կացութաձևերը, ունեցել է աւբուրեն, զարգացած մշակույթ, ինչպես նաև մեկ անգամից ավելի՝ պետականություն։

Ա. Քամալը իր աշխատության նշված բաժնում ղգալի տեղ է հատկացրել XIX դարի II կեսին Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրադրությանը։ Նա ներկայացնում է հայ ժողովրդի արևմտյան հատվածի սոցիալական ծանր վիճակը, նրա նկատմամբ Օսմանյան կայսրության կիրառած կամայականությունները, բռնությունները, ինչպես նաև հակաօսմանյան շարժումները և ապստամբությունները, ցույց է տալիս թուրքական ղեկավար շրջանների խրախուսանքով հայերի դեմ քուրդ ֆեոդալների կիրառած հալածանքները Արևմտյան Հայաստանում։

Հեղինակի շարադրանքի գերակշռող մասը պատմում է XIX դարի վերջերից սկսված հայկական ջարդերի և 1914—1915 թթ. ցեղասպանության մասին։ Այս առիթով էլ նա շրջանառության մեջ է դրել ժամանակակիցների վկայություններ և այլ նյութեր, որոնք նկարագրում են հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման վայրագ տեսարանները։ «Շատ ցավալի է, որ քրդերը քիչ թե շատ, դիտակցաբար և անգիտակցաբար, ուրիշների դրդմամբ և թե կամավոր կերպով մասնակցեցին հայկական այս կոտորածներին...»,— գրում է հեղինակը (էջ 257)։

Ընդունելով պատմական անժխտելի իրողությունը և քննադատելով քրդերի ոտնձգությունները, քուրդ պատմաբանը չի ձգտել վերստին կրքեր բորբոքել։ Ր մի բերելով տարբեր շրջաններում հայկական ցեղասպանությանը քրդական զանգվածների մասնակցության վերաբերյալ մի շարք օրինակներ, Ա. Քամալը ևրաբ և քուրդ ժողովուրդների հասարակական դատին լ, ներկայացնում անհերքելի հշմարտություն։

Ջնայած հեղինակը շեշտում է հայկական ջարդերին քրդական ցեղերի և ցեղապետների մասնակցելու տնտեսական ու քաղաքական որոշակի դրդապատճառները, այնուամենայնիվ նա հաճախ ընդգծում է քրդերի հետամնացությունը և մասնավորաբար նրանց կրոնական մոլեռանդությունը, որոնք խիստ բացասական դեր խաղացին ջարդերի ընթացքում։ «Հասարակ շատ քրդեր հայերի սպանությունը դիտում էին որպես «Ջիհադ» (սրբազան պատերազմ) հանուն աստծո...» (էջ 261)։

Ցավելով հայ ժողովրդի դառը ճակատագրի համար և մեղադրելով Օսմանյան կայսրության մարդատյաց քաղաքականությունը, Ա. Քամալը նշում է, որ թուրք ղեկավար շրջանները ամեն կերպ ջանում էին քրդերի ձեռքով «լուծել հայկական հարցը»։

Ա. Քամալը գրում է, որ քուրդ ժողովուրդը բևև մասնակցեց ջարդերին, սակայն բնավ միաձակից չէր դրանց կազմակերպմանը, որը վաղուց էր ծրագրված սուլթանի կողմից և օրակարգի հրատապ խնդիրներից մեկն էր։

Անդրադառնալով Համիդյան գնդերի գործողություններին, հեղինակը գտնում է, որ իրոք, դրանց կորիզը կազմված էր քրդերից, սակայն այդ միավորումները պետական կազմակերպություններ էին, որոնք իրականացնում էին սուլթանական կառավարության քաղաքականությունը։

Իր շարադրանքի վերջում քուրդ պատմաբանը բերել է մի շարք օրինակներ, ցույց տալու համար, որ երբեմն քրդերը, մասնավորապես եզդիները, օգնության ձեռք են մեկնել հայերին և փրկել հազարավորների։ «Շատ քրդեր օգնում էին հայերին պիմելու փախուստի և թաքնվելու թշնամուց։ Որոշ շրջաններում նրանք զենքով միանում էին հայերին... որպես բողոքի ցույց, հայկական ջարդերին վերջ տալու համար...» (էջ 297)։

Աշխատության վերջին գլխում և վերջաբանում հեղինակը խոսում է աշխարհը մասնատելու նպատակով մեծ տերությունների միջև կնքված պաղտնի համաձայնագրերի մասին։ Նա նշում է, որ պատերազմը շատ ժողովուրդների, այդ թվում և րդերի համար, ծանր հետևանքներ ունեցավ. պատճառեց նյութական վնասներ և մարդկային զոհեր.

Ա. Քամալի «Քուրդստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» մենագրությունը պատկերում է XX դարի առաջին երկու տասնամյակների Քուրդստանի ընդհանուր վիճակը և լուսաբանում թեմային վերաբերող մի շարք կարևոր հարցեր։

Ա. Պ. ՓՈՂԱՐՅԱՆ